

5 – 6-րդ դասարաններ

13. 8 8 8 8 8 8 8 8 թվանշանների միջև քանի հատ + նշանը դնելով է հնարավոր ստանալ 1000թիվը:

- 1) 3 2) 4 3) 3 և 4 4) այլ պատասխան:

14. Թիվը 4-ի և 9-ի բաժանելիս ստացված մնացորդների արտադրյալը հավասար է 7-ի: Գտիր այդ մնացորդների գումարը:

- 1) 3 2) 7 3) 8 4) կարող է լինել ցանկացած թիվ:

15. Տիգրանը, Տաթևիկը, Աշխենն ու Գևորգը որոշում են հերթով կարդալ «Հեծանվորդ» ամսագիրը, իսկ հերթակախությունը որոշել վիճակահանության միջոցով: Աշխենն ու Գևորգը հարևաններ էին և կարող էին ամսագիրն իրար հեշտությամբ փոխանցել, սակայն վիճակահանության արդյունքներն այնպես ստացվեցին, որ բոլորն էլ ամսագիրը փոխանցել ու ստանալ կարող էին միայն դպրոցում իրար հանդիպելով: Ընդ որում ամսագիրը վերջինը կարդալու է Գևորգը, իսկ Տաթևիկը այն փոխանցելու է Տիգրանին: Որոշել թե ո՞ւմ է բախտ վիճակվել առաջինը կարդալ ամսագիրը:

- 1) Գևորգ 2) Տիգրան 3) Տաթևիկ 4) Աշխեն

16. 2012 հատ բնական թվերի գումարը հավասար է 2014-ի: Ի՞նչ առավելագույն արժեք կարող է ընդունել այդ բոլոր թվերի արտադրյալը:

- 1) 2 2) 3 3) 4 4) ցանկացած մեծ թիվ:

17. Արմենի խնձորների քանակը 8-ով ավել է Խաչիկի խնձորների քանակից: Քանի՞ խնձոր ավել կունենա Արմենը, եթե իր խնձորներից երեքը տա Խաչիկին:

- 1) 3 2) 5 3) 8 4) 2

18. Բոլոր բնական թվերը ներկել են երեք գույնի հետևյալ կերպ. 1-ներկել են կարմիր, 2-ը կապույտ, 3-ը դեղին, 4-ը կարմիր, 5-ը կապույտ, 6-ը դեղին և այսպես շարունակ: Ի՞նչ գույն կարող է ունենալ կարմիր և կապույտ գույնի թվերի գումարը:

- 1) միայն կարմիր 2) միայն դեղին 3) միայն դեղին կամ կարպույտ
4) կարող է լինել ցանկացած գույնի

19. A և B քաղաքներից, միաժամանակ իրար ընդառաջ շարժվեցին համապատասխանաբար ավտոմեքենան ու հեծանվորդը: Երբ ճանապարհին նրանք իրար հանդիպեցին, հեծանվորդն իր հեծանիվը բարձեց մեքենայի վրա և ավտոմեքենան վերադարձավ A քաղաք: Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ

- 1) հեծանվորդը հեծանվի դեկին և մեքենայում անց կացրեց միևնույն քանակությամբ ժամանակ:
2) հեծանվորդը հեծանվի դեկին ավելի շատ ժամանակ ծախսեց, քան թե մեքենայում:
3) հեծանվորդը մեքենայում ավելի շատ ժամանակ ծախսեց, քան թե հեծանվի դեկին:
4) թե որ տրանսպորտային միջոցում ավելի երկար ժամանակ ծախսեց հեծանվորդը կախված է քաղաքների միջև հեռավորությունից:

20. Առավելագույնը որքա՞ն մակերես է հնարավոր ծածկել 50 և 60 մակերեսով ուղղանկյուններով:

- 1) 10 2) 50 3) 60 4) 110: